

4.2.2. Ներքին զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների՝ 2011թ. հունվար-դեկտեմբերին հանրապետության տարածքում տեղաբաշխված զբոսաշրջիկների կոլեկտիվ և անհատական տեղավորման միջոցներում (կացարաններում) տեղավորվել են 489419 զբոսաշրջիկներ (ՀՀ ռեզիդենտներ)¹, ինչը 2010թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 7.2%-ով:

Ներքին զբոսաշրջությունն ըստ նպատակի

մարդ

	2010 թ. հունվար- դեկտեմբերին	2011 թ. հունվար- դեկտեմբերին	Տեսակարար կշիռը (2011թ. հունվար- դեկտեմբերին, %)	Աճի տեմպը, %
Ընդամենը զբոսաշրջիկներ²	456432	489419	100.0	107.2
որոնցից ըստ նպատակի՝				
գործնական	107104	114426	23.4	106.8
հանգստի և ժամանցի	258872	312567	63.9	120.7
բուժման	50362	29144	6.0	57.9
այլ	40094	33282	6.8	83.0

¹Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջիկության համաշխարհային կազմակերպության (ՁՀԿ) մեթոդաբանության (International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010) **ներքին զբոսաշրջիկ** է համարվում ցանկացած անձը, որը ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրի երկրի սահմաններում (սովորական բնակության միջավայրից դուրս), այսինքն որևէ երկրի բնակիչների ճանապարհորդությունը իրենց իսկ երկրում կամ հիմնական բնակության երկրում, անկախ ճանապարհորդության նպատակից (բացի ուսման նպատակով) ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով և ճանապարհորդության գլխավոր նպատակը չի հանդիսանում գործունեությամբ զբաղվելը, որի համար վճարվում է այցելած վայրում:

² Տվյալներն արտացոլում են միայն հյուրանոցներում, հյուրանոցային հանգրվաններում, առողջարաններում, հանգստյան տներում հաշվառված զբոսաշրջիկներին: